

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎԱՐՏ-ԳՀԾՁԲ-20/3-2**

ք. Երևան

« 02 » ապրիլ 2020թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում «էլեկտրոնային գնումներ» բաժնում՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա **ծառայության առավելագույն գինը կազմում է 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_9 = U_9 / N_9 \times D \times P$, որտեղ՝

V_9 -ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 2-րդ չափաբաժնի համար 10792850 (տաս միլիոն յոթ հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 10742250 (տաս միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 2-րդ չափաբաժնի համար 21551500 (քսանմեկ միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 21445300 (քսանմեկ միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Բնապահպանության և ընդերքի տեսչական

մարմին՝ բացառությամբ ֆինանսական գործառնությունների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554

[Handwritten signature]

(ստորագրություն)

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
«Արարատրանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
2	50111130-2	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	2 500 000	1	ք. Երևան, մատակարարի կողմից նշված հասցեն	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը
3	50111130-1	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	1 500 000	1	ք. Երևան, մատակարարի կողմից նշված հասցեն	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
 ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
 Կառավարական տուն, 1
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011024040
 ՀՎՀՀ 02505554

(Ստորագրություն)

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
 ք. Երևան, Ռուփինյանց փ. 31
 «Արարատրանկ» ԲԲԸ
 Հ/Հ 1510012745550100
 ՀՎՀՀ 00873228



Գ Ն Ա Ց ՈՒ Ց Ա Կ*

ՀՀ դրամ

Հ/Հ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափաբաժին 2	Չափաբաժին 3
		Միցուրիչի Պաշերո, Միցուրիչի L200, Տոյոտա Կորոլա	Շեվրոլետ կապտիվա
1	2	4	5
1	Բռնկման համակարգի ստուգում	1502	1503
2	Սառեցման համակարգի ստուգում	1502	1503
3	Յուղման համակարգի ստուգում	1502	1503
4	Արտացման համակարգի ստուգում	1502	1503
5	Կցորդման համակարգի ստուգում	1502	1503
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	1502	1503
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	1502	1503
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	1502	1503
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1502	1503
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	1502	1503
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	1502	1503
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	1502	1503
13	ABS համակարգի ստուգում	1502	1503
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1502	1503
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1502	1503
16	Թափքի վիճակի ստուգում	1502	1503
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1502	1503
SU-1 ներառվող ծառայությունների անվանումը			
1. Շարժիչ			
18	Շարժիչի հանում և տեղադրում	35056	35064
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	37560	37569
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	40063	40073
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	42567	42578
22	Շարժիչի վերանորոգում	175278	175320
23	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	8013	8015
24	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	12520	12523
25	Նույնը աջի համար (V6)	12520	12523
26	Նույնը ձախի համար (V6)	12520	12523
27	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	32552	32559
28	Նույնը աջի համար (V6)	32552	32559
29	Նույնը ձախի համար (V6)	32552	32559
30	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	9014	9016
31	Շարժիչի գլխիկի վերանորոգում	35056	35064
32	Փականի խցուկի փոխարինում	2504	2505
33	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	17528	17532
34	Նույնը V6-ի ձախի դեպքում	17528	17532
35	Նույնը V6-ի աջի դեպքում	17528	17532
36	Նույնը DOHC դեպքում	17528	17532
37	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	17528	17532
38	Հրիչի փոխարինում SOHC	3005	3005
39	Նույնը DOHC դեպքում	2504	2505
40	Ատամնավոր փոկի փոխարինում	22536	22541
41	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	12520	12523
42	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	32552	32559
43	Մխոցային օղակների փոխարինում	75119	75137

44	Թափանիվի հանում և տեղադրում	15024	15027
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
45	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	501	501
46	Յուղի պոմպի փոխարինում	5008	5009
47	Ղեկավարման բլոկի վերանորոգում	12520	12523
48	Բռնկման կարգավորում	2504	2505
49	CO կարգավորում	1502	1503
50	խարնարակի հանում և տեղադրում	2504	2505
51	խարնարակի վերանորոգում	3005	3005
52	Օդի գտիչի փոխարինում	1002	1002
53	հնժեկտորի ֆորսունկայի փոխարինում	2504	2505
54	հնժեկտորի ֆորսունկաների մաքրում	15024	15027
55	Բենզամոդիչի փոխարինում	7512	7514
56	Վառելիքի գտիչի փոխարինում	7512	7514
57	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	7512	7514
58	Տրամյորի հանում և տեղադրում	1502	1503
59	Տրամյորի վերանորոգում	1002	1002
	3. Սառեցման և արտածման համակարգ		
60	Հովհարի փոկի հանում և տեղադրում	4006	4007
61	Հովհարի հանում և տեղադրում	7512	7514
62	Ռադիատորի հանում և տեղադրում	9014	9016
63	Նույնը կոնդիցիոների դեպքում	7512	7514
64	Ռադիատորի վերանորոգում	25040	25046
65	Թերմոստատի փոխարինում	7512	7514
66	Ջրի պոմպի փոխարինում	15024	12523
67	Ընդարձակող բաքի փոխարինում	2504	2505
68	Խլարարի հանում և տեղադրում	5008	5009
69	Նույնը DOHC դեպքում	5008	5009
70	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2504	2505
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
71	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	12520	12523
72	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	9014	9016
73	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	17528	17532
74	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	2504	2505
75	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	2504	2505
76	ՓՏ-ի հանում և տեղադրում	20032	20037
77	ՓՏ-ի վերանորոգում	70111	70128
78	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	5008	5009
79	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	17528	17532
80	Վագրաչափի շարժաբերի փոխարինում	7512	7514
81	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	17528	17532
82	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	30048	30055
83	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	27544	27550
84	ԱՓՏ-ի վերանորոգում	175278	175320
85	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	7512	7514
86	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	7512	7514
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
87	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	15024	15027
88	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	45071	62614
89	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	10016	10018
90	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	7512	7514
91	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	7011	7013
92	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	9014	9016
93	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	9014	9016
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
94	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	20032	22541
95	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	47575	47587
96	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	22536	22541

97	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադր.	9014	9016
98	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	7512	7514
7. Կախոց			
99	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	22536	22541
100	Տրավերսի հանում և տեղադրում	17528	17532
101	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում	7512	7514
102	Անվակունդի առանցքակալի փոխարինում	7512	7514
103	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	7512	7514
104	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	6010	6011
105	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	7512	7514
106	Ձախ կամ աջ հողակալի խցուկների փոխարինում	4507	4508
107	Ձախ կամ աջ հողակալի առանցքակալների փոխարինում	4507	4508
108	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	3005	3005
109	Զսպանակի հանում և տեղադրում	3506	3506
110	Զսպակի հանում և տեղադրում	3506	3506
111	Զսպակի վռանների փոխարինում	4006	4007
112	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	4006	4007
113	Ներքևի լծակի հանում և տեղադրում	7512	7514
114	Ներքևի լծակի վռանի փոխարինում	4006	4007
115	Առջևի աջ կամ ձախ ձգանի հանում և տեղադրում	4006	4007
116	Միջին ձգանի հանում և տեղադրում	3756	3757
117	Ճռճանակային լծակի հանում և տեղադրում	4257	4258
118	Վերևի լծակի հանում և տեղադրում	7512	7514
119	Վերևի լծակի վռանների փոխարինում	4507	4508
120	Գնդե հողակալերի փոխարինում	7011	7013
121	Ծայրականների հանում և տեղադրում	4507	4508
122	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	7512	7514
123	Առջևի կայունարարի վռանի փոխարինում	4006	4007
124	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	2003	2004
125	Հետևի զսպանակի փոխարինում	4006	4007
126	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	4006	4007
127	Հետևի ձգամողի հանում և տեղադրում	6010	6011
128	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	6010	6011
129	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	6510	6512
130	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	2504	2505
131	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	2003	2004
132	Անվաբացքի կարագավորում	7512	7514
133	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1502	1503
8. Ղեկային մեխանիզմ			
134	Ղեկային կալունի հանում և տեղադրում	15024	15027
135	Նույնը V6-ի համար	15024	15027
136	Ղեկային կալունի վերանորոգում	65103	65119
137	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	6010	6011
138	ՂԿ-ի հողակալերի հանում և տեղադրում	8013	8015
139	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	15024	15027
140	Նույնը DOHC դեպքում	15024	15027
141	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	5008	5009
142	Նույնը DOHC դեպքում	5008	5009
143	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	7512	7514
144	Նույնը DOHC դեպքում	7512	7514
145	Նույնը կոնդիցիոների դեպքում	7512	7514
146	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	12520	12523
147	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	14022	14026
9. Արգելակային համակարգ			
148	Գլխ. գլանի հանում և տեղադրում	12520	12523
149	Գլխ. գլանի վերանորոգում	12520	12523
150	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	10016	10018
151	Բանվ. գլանի հանում և տեղադրում	10016	10018
152	Բանվ. գլանի վերանորոգում	7512	7514
153	Արգելակային համակարգի օդահանում	2504	2505

154	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	6010	6011
155	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	6010	6011
156	Առջևի սուպպորտի վերանորոգում	6010	6011
157	Հետևի սուպպորտի վերանորոգում	6010	6011
158	Արգելակային փողրակի փոխարինում	2504	2505
159	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2504	2505
160	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	2504	2505
161	Հետևի կոճղակների փոխարինում	2504	2505
162	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4006	4007
163	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	4006	4007
164	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	4006	4007
165	ABS-ի հանում և տեղադրում	12520	12523
166	ABS-ի վերանորոգում	15024	15027
167	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	9014	9016
168	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	5008	5009
	10. Էլեկտրասարքավորում		
169	Էլեկտրասարքավորման վերանորոգում	10016	10018
170	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	5008	5009
171	Գեներատորի հանում և տեղադրում	6010	6011
172	Նույնը V6-ի դեպքում	6010	6011
173	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	6010	6011
174	Գեներատորի վերանորոգում	5008	5009
175	Մեկնարկիչի հանում և տեղադրում	6010	6011
176	Մեկնարկիչի վերանորոգում	6010	6011
177	Առջևի լապտերի հանում և տեղադրում	3005	3005
178	Հետևի լապտերի հանում և տեղադրում	3005	3005
179	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	5008	5009
180	Վազքաչափի հանում և տեղադրում	7512	7514
181	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	4006	4007
182	Սաքերի պանելի հանում և տեղադրում	17528	17532
183	Արագաչափի հանում և տեղադրում	7512	7514
184	Ազդանշանի հանում և տեղադրում	5008	5009
185	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	5008	5009
186	Դռների կենտրոնական փակմանի հանում և տեղադրում	9014	9016
187	Ազդանշանային համակարգի տեղադրում	5008	5009
188	Մագնիստոլայի տեղադրում	2504	2505
189	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	7512	7514
190	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	12520	12523
191	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	15024	15027
192	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	10016	10018
193	Էլեկտրական տվիչների փոխարինում	2504	2505
194	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1002	1002
195	Վառոցքի մոմի փոխարինում	2504	2505
196	Կոնդիցիոների լիցքավորում	8013	8015
197	Կոնդիցիոների վերանորոգում	2504	2505
	11. Այլ ծառայություններ		
198	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	2504	2505
199	Ավտոմեքենայի լվացում	1252	1252
200	Անիվի հանում և տեղադրում	501	501
201	Անվաղողի վերանորոգում	2504	250
202	Անիվի բայանսավորում	1002	1002
203	Անիվի վալց	2504	2505
204	CO-գողման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	2504	2505
205	Խառատային աշխատանքներ 1 ժամ	5008	5009
206	Փականագործի աշխատանքներ 1 ժամ	5008	5009
207	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	751	751
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
	1.Շարժիչ		

1	Շարժիչի բլոկ	726150	781426
2	Շարժիչի գլխիկ	615976	676234
3	Բարձիկ	32552	32559
4	Շարժիչի գլխիկի միջադիր	12520	12022
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	72615	64868
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	142726	162797
7	Շարժիչի փական դուրս մղող	3506	3506
8	Շարժիչի փական ներս մղող	3506	3506
9	Շարժիչի փականի խցուկ	1502	1503
10	Ծնկածն լիսեռ	128203	142760
11	Ծնկածն լիսեռի խցուկ առջևի	7512	7514
12	Ծնկածն լիսեռի խցուկ հետևի	10016	10018
13	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	17528	17532
14	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	20032	20037
15	Հենակային տափողակ	2504	2505
16	Մխոց	40063	40073
17	Մխոցային օղակներ	37560	32559
18	Ատամնանիվ	7512	7514
19	Ատամնավոր փոկ	200317	20037
20	Շղթա	26041	24294
21	Հիդրոծգան	12520	12523
22	Հրիչ	2504	2505
23	Հիդրոհրիչ	9014	9016
24	Բաշմակ	7512	7514
25	Հանգստարար	5008	5009
26	Թափանիվ	10016	10018
27	Թափանիվի պսակ	2504	2505
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	501	501
29	Շկիվ	12520	12523
30	Շարժաթև	7512	7514
31	Կարտերի միջադիր	4006	4007
32	Միջադիր	4006	4007
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր (Բ ար ձ ր ո թ ա կ ` մ ե ք ե ն ա յ ի մ ա կ ն ի շ ի ն հ ամ ա պ ա տ ա ս խ ա ն)	1402	1403
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր (Բ ար ձ ր ո թ ա կ ` մ ե ք ե ն ա յ ի մ ա կ ն ի շ ի ն հ ամ ա պ ա տ ա ս խ ա ն)	1502	1503
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր (Բ ար ձ ր ո թ ա կ ` մ ե ք ե ն ա յ ի մ ա կ ն ի շ ի ն հ ամ ա պ ա տ ա ս խ ա ն)	2254	2254
36	Յուղի գտիչ	2504	2505
37	Յուղի պոմպ	22536	22541
38	Յուղի պոմպի շարժաթեր	6010	6512
39	Յուղի ռադիատոր	22536	19035
40	Յուղի փողորակ	4006	4007
41	Յուղի ծորակ	6010	5761
43	Վառոցքի մոմ	4507	4007
44	Բենզոքաք	40063	40073
45	Խառնարակ	1502	1503
46	Խառնարակի վերանորոգման հավաքածու	15024	15027
47	Ինժեկտորի ֆորսունկա	27544	25046
48	Վառելանյութի մղիչ էլեկտրական	44571	37569
49	Վառելանյութի մղիչ մեխանիկական	1502	1503
50	Վառելանյութի գտիչ	15024	15027
51	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	5008	5009
52	Վառելանյութի փողորակ	7512	7514
53	Աքսելերատորի ճոպան	7512	7514
54	Օդի գտիչ	7512	7013
55	Զերմաստիճանային տվիչ	17528	17532

56	Յուղի տվիչ	20032	20037
57	Բաշխիչ լիսեռի տվիչ	17528	17532
58	Օդի ծախսի տվիչ	37560	37569
59	Արագաչափի տվիչ	14022	14026
60	Հովհարի տվիչ	12520	12523
61	Զրի տվիչ	9515	9517
62	Բենզոլեռի տվիչ	10016	10018
63	Մարման ընթացքի կարգավորիչ	13271	13274
64	Մարման ընթացքի տվիչ	11168	11170
65	Ղեկավարման համակարգիչ	127702	127733
66	Պարապ ընթացքի տվիչ	12520	12523
67	Դրոսելային փականի տվիչ	11518	11521
68	Թթվածնի տվիչ	16025	16029
	3. Սառեցման և արտածման համակարգ		
69	Հովհարի փոկ	7512	7514
70	Հովհար	17528	17532
71	Ուղիատոր	42567	42578
72	Ընդարձակող բաք	17528	17532
73	Ուղիատորի փողրակ	7512	7514
74	Թերմոստատ	11017	11020
75	Զրի պոմպ	27544	27550
76	Զրի պոմպի առանցքակալ	11017	11020
77	Զրի պոմպի թևակ	7512	7514
78	Սառեցման հեղուկ 1 լիտր	1502	1503
79	Զրի պոմպի սռնանիվ	501	501
80	Հոլովակ	4006	4007
81	Փոկ	7512	7514
82	Փոկ կոնդիցիոներ	4006	4007
83	Ծորակ	6010	6011
84	Խլարարի ներդիր	4006	4007
85	Խլարարի կախոց	2504	2505
86	Կրոնշտեյն	2003	2004
87	Անուր (Խամուտ)	250	250
88	Խլարար	50079	50091
89	Ռեզոնատոր	25040	25046
90	Վառարանի ռադիատոր	32552	32559
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
91	Կցորդման բանվորական գլան	21033	21038
92	Կցորդման գլխավոր գլան	17528	17532
93	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	9014	9016
94	Կցորդման տանող սկավառակ	27544	27550
95	Կցորդման տարվող սկավառակ	24038	24044
96	Կցորդման առանցքակալ	17528	17532
97	Կցորդման փողրակ	7512	7514
98	Փոխանցման տուփ	1251984	1252285
99	ՓՏ-ի առջևի խցուկ	7512	7514
100	ՓՏ-ի հետևի խցուկ	7512	7514
101	ՓՏ-ի առանցքակալ	7512	7514
102	ՓՏ-ի առաջնային լիսեռ	32552	32559
103	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	29547	29554
104	ՓՏ-ի եղանիվ	22536	22541
105	ՓՏ-ի ատամնանիվ	16025	16029
106	Համաժամիչ	12520	12523
107	Մուֆտ	40063	40073
108	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	17528	17532
109	ԱՓՏ-ի գտիչ	17528	12523
110	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	37560	32559
111	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	40063	40073
112	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	4006	4007
113	ԱՓՏ յուղ, 1 լիտր	6010	6011
114	ՓՏ-ի առաջնային լիսեռ	501	501

115	Հերմետիկ 125գր	2504	2505
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեր		
116	Բաշխիչ տուփ	676071	726325
117	Բաշխիչ տուփի խցուկ	15024	15027
118	Բաշխիչ տուփի առանցքակալ	37560	37569
119	Բաշխիչ տուփի ատամնանիվ	32552	32559
120	Բաշխիչ տուփի լիսեր	60095	60110
121	Կարդանային լիսեր	77623	77642
122	Էլաստիկ մուֆտ	22536	22541
123	Կարդանային լիսերի միջանկյալ հենակ	17528	17532
124	Կարդանային լիսերի խաչուկ	12520	12523
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
125	Հետևի կամ առջևի կամրջակ	711127	676234
126	Ռեդուկտոր	122694	131239
127	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	17528	17532
128	Դիֆֆերենցիալ	22536	22541
129	Դիֆֆերենցիալի սատելլիտ	27544	27550
130	Տանող ատամնանիվի խցուկ	22536	22541
131	Տանող ատամնանիվի առանցքակալ	17528	17532
132	Դիֆֆերենցիալի առանցքակալ	12520	12523
133	Կիսասունի	22536	22541
134	Կիսասունու առանցքակալ	12520	12523
135	Կիսասունու միջադիր	7512	7514
136	Կիսասունու խցուկ	5008	5009
137	Կարգավորիչ տափողակ	2504	2505
	7. Կախոց		
138	Տրավերս	22536	22541
139	Կրոնշտեյն	2504	2505
140	Չախ կամ աջ հողակապ	37560	37569
141	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	7512	7514
142	Անվակունդ	27544	27550
143	Անվակունդի խցուկ	7512	7514
144	Անվակունդի ներքին առանցքակալ	22536	22541
145	Անվակունդի արտաքին առանցքակալ	17528	17532
146	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	22536	22541
147	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	17528	17532
148	Չախ կամ աջ հողակապի խցուկ	7512	7514
149	Հարվածամեղմիչի թասակ	14022	14026
150	Զսպանակ	12520	12523
151	Առջևի հարվածամեղմիչ	32552	32559
152	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	6010	6011
153	Հարվածամեղմիչի վռան	2003	2004
154	Ներքևի լծակ	72615	72633
155	Ներքևի լծակի վռան	9014	9016
156	Վերևի լծակ	62599	62614
157	Վերևի լծակի վռան	6010	6011
158	Գնդե հողակապ	12520	12523
159	Առջևի կայունարար	21033	19536
160	Առջևի կայունարարի վռան	4507	4007
161	Առջևի կայունարարի առջևի վռան	1252	1252
162	Հետևի զսպանակ	11017	10519
163	Հետևի ցնցամեղմիչ	24038	22541
164	Հետևի մետաղաձող (շտանգա)	17528	15027
165	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	5008	5009
166	Հետևի անկյունագծային լծակ	22536	19536
167	Անկյունագծային լծակի վռան	5509	5260
168	Զսպակ (ռեսսորա)	50079	50091
169	Զսպակի վռան	7512	7514
170	Զսպակի միջադիր	7512	7514
171	Զսպակի բռնիչ	7512	7514
172	Աջ կամ ձախ ձգան	9265	9267

173	Ծայրակալ	7812	7814
174	Ձգան մեջտեղի	4758	4759
175	Անվահեծ	30048	30055
	8. Ղեկային մեխանիզմ		
176	Ղեկային կալուն	122845	118015
177	Ղեկային կալունի առանցքակալ	7512	7514
178	Ղեկային կալունի խաչուկ	12520	12523
179	Հիդրոուժեղարար	27544	27550
180	Հիդրոուժեղարարի փոկ	7512	7514
181	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	12520	12523
182	Հիդրոուժեղարարի պոմպ	17528	17532
183	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	7512	7514
184	Ղեկային ձող	12520	12523
185	Ղեկային ձողի ծայրակալ	7512	7514
186	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	4507	4508
187	Ճոճանակ	20032	20037
188	Ճոճանակի վրան	7512	7514
	9 Արգելակային համակարգ		
189	Գլխ. գլան	17528	17532
190	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	7512	7514
191	Վակուումային ուժեղարար	21033	21038
192	Բանվ. գլան	12520	12523
193	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	7512	7514
194	Արգելակային փողրակ	6010	6011
195	Սուպպորտի ուղղորդիչ	7512	7514
196	Սուպպորտի մանժետ	6010	6011
197	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	17528	17532
198	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	16025	16029
199	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	12520	12523
200	Առջևի արգելակային սկավառակ	21033	21038
201	Հետևի արգելակային սկավառակ	21033	21038
202	Ձեռքի արգելակի ճոպան	7512	7514
203	ABS-ի տվիչ	7512	7514
204	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	1252	1252
205	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2003	2004
206	Ձեռքի արգելակի ճոպան	9515	9517
	10 Էլեկտրասարքավորում		
207	Գեներատոր	132710	126230
208	Գեներատորի դիողային կամրջակ	17528	17532
209	Գեներատորի ռելե	19030	19035
210	Գեներատորի առանցքակալ	16025	16029
211	Ստարտեր	117686	117715
212	Ստարտերի ռելե	14523	14527
213	Ստարտերի ածուխ	9014	9016
214	Բենդեքս	19531	19536
215	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	12520	12523
216	Առջևի լապտեր	32552	32559
217	Առջևի թարթիչ	7512	7514
218	Հետևի լապտեր	12520	12523
219	Հետևի թարթիչ	2504	2505
220	Արգելակային լապտեր	7512	7514
221	Լամպ	6010	6011
222	Էլեկտրական անջատիչ	2504	2505
223	Էլեկտրական տվիչ	3005	3005
224	Էլեկտրական չափիչ սարք	3506	3506
225	Բռնկման կողպեք	2504	2505
226	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	32552	32559
227	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	22536	21038
228	Վառոցքային լարերի խուրց	12520	12523
229	Վառոցքի մոմի ծայրակալ	2003	2004
230	Վազքաչափ	10016	10018

231	Վազբաչափի ճոպան	5008	5009
232	Արագաչափ	7512	7514*
233	Ազդանշան	5008	5009
234	Ապակեվացիչ	2504	2505
235	Ապակեվացիչի շարժիչ	12019	12523
236	Դռների կենտրոնական փական	17528	17532
237	Ազդանշանային համակարգ	12520	12523
238	Մագնիտուլա	12520	12523
239	Էլեկտրամբարձիչ	15024	15027
240	Էլեկտրամբարձիչի շարժիչ	11017	10519
241	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր <i>գին 1դ/մ</i> <i>վերանորոգման համար</i>	7512	7514
	Ընդամենը	10792850	10742250

Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է՝

SU – 1 ծառայություն / տեխ. գննում ըստ հավելվածի/,

SU – 2 ծառայություն/ տեխ.սպասարկում և վերանորոգում ըստ հավելվածի:

1 - պարտադիր պայման է օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի չօգտագործված լինելը,

2 - տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում: Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն 3 էլեկտրական ամբարձիչներով՝ առնվազն երեք ու կես փոննա բարձրացնելու կարողությամբ,՝ անվաբացքի ուղղման ստենդով, ինժեկտորների լվացման ստենդով, փափքի ուղղման ստենդ, չորացման, դիֆուզիոն: Ծառայությունները պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ երեք օրացուցային օրվա ընթացքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

*Ծառայության միավոր գները հաշվարկված են սույն Պայմանագրի 4.2 կետով սահմանված բանաձևի համաձայն:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Կ 900011024040
ՀՎՀՀ 02505554

[Handwritten Signature]
(սպորադրություն)

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
«Արարատրանկ» ԲԲԸ
Հ/Կ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ն» դրամ

Ծառայության

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
2	50111130-2	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	-	-	-	875000	875000	875000	1500000	1500000	1500000	2500000	2500000	2500000	2500000	2 500 000
3	50111130-1	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	-	-	-	525000	525000	525000	900000	900000	900000	1500000	1500000	1500000	1 500 000	

* Վճարումները կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
 ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
 Կառավարական տուն, 1
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011024040
 ՀՎՀՀ 02505554

[Handwritten Signature]

(ստորագրություն)


Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
 ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
 «Արարատքանկ» ԲԲԸ
 Հ/Հ 1510012745550100
 ՀՎՀՀ 00873228

[Handwritten Signature]



Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
 « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
 արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար/ դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն